## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն   Կ Ո Մ Ի Տ Ե

## Գ Լ Խ Ա Վ Ո Ր   Ք Ա Ր Տ Ո Ւ Ղ Ա Ր

ք. Երևան «17» օգոստոսի 2023 թ.

# Հ Ր Ա Մ Ա Ն <u>№ 10-Ա[1]</u>

### ԱՐՄԻՆԵ ՍՈՂՈՄՈՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի «Քաղաքացիական ծառայողի փորձաշրջանի հետ կապված առանձնահատկությունները սահմանելու մասին» N 441-Ն որոշման հավելվածի 2-րդ, 7-րդ, 8-րդ և 14-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի անձնակազմի կառավարման բաժնի բարեվարքության հարցերով կազմակերպչի (ծածկագիր՝ 18-1-28.3-Մ3-1) թափուր պաշտոնը համալրելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի եզրակացությունը և Արմինե Բաղդասարյանի անձնական դիմումը՝

### *Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ.*

1. Արմինե Սողոմոնի Բաղդասարյանին 2023 թվականի օգոստոսի 18-ից ինն ամիս փորձաշրջանով նշանակել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի անձնակազմի կառավարման բաժնի բարեվարքության հարցերով կազմակերպչի (ծածկագիր՝ 18-1-28.3-Մ3-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնում:

2. Արմինե Սողոմոնի Բաղդասարյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի քարտուղարության պետ Յուրի Պետրոսյանին:

3. Արմինե Սողոմոնի Բաղդասարյանի ամսական աշխատավարձի չափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Invalid signature

X 

ԼԵՎՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆ
Գլխավոր քարտուղար
Signed by: FARMANYAN LEVON 3211800638

**Լ. ՖԱՐՄԱՆՅԱՆ**